Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 24.11/[115016]-12

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 25-ԻՆ ԺԱՄԸ 10:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ` ՀՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

---

**քաղ. Երևան**
**Մասնակցում էին`**

*Խորհրդի անդամներ* `

| | |
|---|---|
| Ա. Գևորգյան | ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար |
| Ա. Հարությունյան | ՀՀ բնապահպանության նախարար |
| Տ. Դավթյան | ՀՀ էկոնոմիկայի նախարար |
| Ա. Գրիգորյան | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար |
| Վ. Գաբրիելյան | ՀՀ ֆինանսների նախարար |
| Ս. Կարապետյան | ՀՀ գյուղատնտեսության նախարար |
| Ա. Մովսիսյան | ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար |
| Ռ. Մարտիրոսյան | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ |
| Դ. Գերչևա | ՄԱԿ-ի մշտական համակարգող, ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի մշտական ներկայացուցիչ |
| Ա. Մարտիրոսյան | ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի բնապահպանական ծրագրերի ղեկավար |
| Գ. Օգանեզովա | ՀՀ բուսաբանական ընկերության փոխնախագահ |
| Հ. Սարգսյան | «Տապան» էկո-ակումբ» ՀԿ-ի նախագահ |
| Ա. Վերմիշյան | «Բուրգ» բնապահպանական երիտասարդական ՀԿ-ի ներկայացուցիչ |
| Ս. Ադամյան | «Հասարակական էկոլոգիական դաշինք» ՀԿ-ի համակարգող |
| Ա. Իսկոյան | «Շրջակա միջավայր իրավական պահպանության |

| | |
|---|---|
| | կենտրոն» ՀԿ-ի նախագահ |
| Կ. Դանիելյան | «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ, ԿԶԱԽ-ի քարտուղար |

*Հրավիրվածներ*

| | |
|---|---|
| Է. Նալբանդյան | ՀՀ արտաքին գործերի նախարար |
| Դ. Սարգսյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար |
| Ս. Պապյան | ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ |
| Ա. Հովակիմյան | ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ |
| Տ. Սահակյան | ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ |
| Ռ. Ալավերդյան | ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ |
| Տ. Գևորգյան | ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ |
| Յու. Պողոսյան | ՀՀ ազգային վիճակագրական ծառայության ՀՀ վիճա-կագրության պետական խորհրդի անդամ |
| Կ. Մարգարյան | ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ |
| Մ. Կորխմազյան | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի արտաքին կապերի բաժնի պետ |
| Վ. Ասլանյան | ՀՀ կառավարության աշխատայկազմի տեղե-կատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ |
| Ա. Գասպարյան | ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության փորձագետ |

1. 2012 թվականին Բրազիլիայի Հանրապետության Ռիո դե Ժանեյրո քաղաքում կայանալիք «Ռիո+20» համաշխարհային գագաթաժողովին նախապատրաստման շրջանակներում Համակարգող ազգային հանձնաժողովի կատարած աշխատանքների հաշվետվության ներկայացում

---

(Է. Նալբանդյան, Ա. Հարությունյան, Տ. Սարգսյան)

Օրակարգի **1-ին** հարցը զեկուցեցին ՀՀ արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանը և ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանը:

**Քննարկումներից հետո որոշվեց՝** ընդունել ի գիտություն ՀՀ արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանի և ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանի ներկայացրած՝ 2012 թվականին Բրազիլիայի Հանրապետության Ռիո դե Ժանեյրո քաղաքում կայանալիք «Ռիո+20» համաշխարհային գագաթաժողովին նախապատրաստման շրջանակներում Համակարգող ազգային հանձնաժողովի կատարած աշխատանքների հաշվետվության մասին հաղորդումները:

2. «Ռիո+20» Ազգային գնահատման զեկույցի նախագծի ներկայացում

---

(Կ. Դանիելյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հանձնարարել ՀՀ բնապահպանության նախարար Ա.Հարությունյանին և առաջարկել «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ, ԿԶԱԽ-ի քարտուղար Կ. Դանիելյանին՝ խմբագրել «Ռիո+20» Ազգային գնահատման զեկույցը՝ հաշվի առնելով նիստում հնչեցված առաջարկությունները.

2) հաստատել «Ռիո+20» Ազգային գնահատման զեկույցի վերջնական խմբագրված տարբերակը:

3. Այլ հարցեր

---

(Կ. Դանիելյան, Հ. Սարգսյան, Տ. Սարգսյան)

**Քննարկումներից հետո որոշվեց՝**

1) հանձնարարել ՀՀ արտաքին գործերի նախարար Է. Նալբանդյանին՝ ՀՀ Նախագահի մոտ քննության առնել «Ռիո+20» համաշխարհային գագաթաժողովի հայկական

պատվիրակության՝ Բրազիլիայի Հանրապետության Ռիո դե Ժանեյրո քաղաք մեկնելու հետ կապված հարցերը.

2) առաջարկել ԿԶԱԽ-ի քարտուղար Կ.Դանիելյանին՝ համագործակցել Տապան» էկո-ակումբ» ՀԿ-ի նախագահ Հ. Սարգսյանին հետ և տրամադրել նախորդ նիստերով տրված հանձնարարականների ընթացքի մասին տեղեկատվություն.

3) հանձնարարել ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանին՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ ՀՀ ԱԺ-ում գտնվող «Գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, նախքան ՀՀ ԱԺ-ի նստաշրջանի սկիզբը, քննության առնել ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ